ԱՌԱԿՆԵՐ

Կարդա՛ առակները և մեկնաբանի՛ր հայրապատումի խորհուրդը:

1. ՀԱՅՐՆ ՈՒ ՈՐԴԻՆ

Մի անգամ՝ ուշ երեկոյան, սովորականի պես հայրը հոգնած տուն է վերադառնում աշխատանքից ու տեսնում է, որ իր հնգամյա որդին դռան առջև իրեն է սպասում:

– Հայրի՛կ, կարո՞ղ եմ քեզ մի բան հարցնել:

– Իհա՛րկե, ի՞նչ է պատահել:

– Հայրի՛կ, դու որքա՞ն գումար ես վաստակում:

– Քո գործը չէ... և հետո՝ ինչի՞դ է պետք:

– Պարզապես ուզում եմ իմանալ, ասա՛, հայրի՛կ, դու որքա՞ն ես վաստակում մեկ ժամում:

– Դե հինգ հարյուր դրամ, ու ի՞նչ:

– Հա՛յր, ինձ երեք հարյուրը կտա՞ս,– շատ լուրջ հայացքով նայելով հորը՝ ասաց տղան:

– Դու ինչ-որ հիմար խաղալիքի համար ինձնից այդքան գումա՞ր ես ուզում... Ես ամբողջ օրը աշխատում եմ, հոգնում, իսկ դո՞ւ:

Տղան կամաց հեռացավ իր սենյակն ու փակեց դուռը:

Հայրը մի փոքր անց հանգստացավ ու սկսեց մտածել. «Հնարավոր է, որ նա ինչ-որ կարևոր բան պետք է գնի... Տղաս ինձնից երբեք գումար չի խնդրել...»... Երբ հայրը մտավ սենյակ, տղան արդեն անկողնում էր...

– Քնա՞ծ ես, տղա՛ս:

– Ո՛չ, ուղղակի պառկած եմ:

– Կարծում եմ՝ շատ կոպիտ խոսեցի քեզ հետ. ես ծանր օր էի ունեցել, ների՛ր ինձ, ահա վերցրո՛ւ գումարը, որը խնդրել էիր:

– Շնորհակա՛լ եմ:

Հետո նա բարձրացրեց բարձն ու դրա տակից հանեց մի քանի

թղթադրամ: Հայրը տեսավ, որ տղան արդեն գումար ուներ ու նորից բարկացավ: Տղան դրանք հաշվեց ու նայեց հորը:

– Ինչո՞ւ խնդրեցիր, եթե գումար ունեիր,– հարցրեց հայրը բարկացած:

– Որովհետև գումարս բավական չէր: Ահա այստեղ ուղիղ հինգ հարյուր է: Ես կարո՞ղ եմ քո ժամանակից ՄԵԿ ԺԱՄ գնել: Խնդրում եմ, վաղը աշխատանքից շո՛ւտ արի, ես ուզում եմ, որ դու մեզ հետ ընթրես:

Տեքստային աշխատանք

1. Նշի՛ր «Հայրն ու որդին» առակի հիմնական իմաստը:
2. Բնութագրի՛ր առակի հերոսներին:

Հերոս	Ֆիզիկական նկարագրություն	Նկարագրի՛ր հերոսի երկու վարքագիծ	Առակից ելնելով՝ բացատրի՛ր, թե ինչու նա այդպես վարվեց
հայր			
որդի			

3. Դատի՛ր «Հայրն ու որդին» առակի հեղինակային գաղափարի և մտահղացման մասին:
4. Կարդա՛ և ներկայացրո՛ւ «Հայրն ու որդին» առակի արտահայտված հույզերն ու ապրումները «Քառաբաժանի» միջոցով:

1. Ի՞նչ էիր տեսնում առակը կարդալիս:	**3. Ի՞նչ էիր զգում առակը կարդալիս:**
2. Ի՞նչ սովորեցրեց առակը քեզ:	**4. Ի՞նչ խորհուրդ կտաս ընկերներիդ՝ առակի իմաստից ելնելով:**

2. ՀԱՅՐ ՈՒ ՈՐԴՈՒ ԱՌԱԿԸ

Ասում են, որ ժամանակին մի մարդ է եղել: Նա ունեցել է մի-նուճար մի որդի: Հերը որդուն աչքի լույսից ավել է սիրել. ինքը չի կերել, որդուն է տվել, ինքը ծարավ է մնացել, ջուրը որդուն է հասցրել, ինքը չի հագել, որդուն է հագցրել: Էդպես սուրբ-սուրբ անելով, հույսը աստծուն տված՝ տղին մեծացնում է, պսակում, մուրազին հասցնում:

Օրերը գալիս են իրար ետևից, գալիս են ու անց կենում, գնում: Տղեն տարիք է առնում, հերն ավելի է մեծանում, պառավում, աչքի լույսը խավարում, ձեռուոտից ընկնում է, չի կարենում մի բան էլա անի:

Տղեն տեսնում է, որ հերը իրա վզին բեռ է դառել, էլ երկար չի մտածում: Մի պարկ է վերցնում, էդ ոտ ու ձեռից ընկած հորը գցում է մեջը, շալակում, տանում իրանց սարը, էնտեղ թողնում:

չէ՞ որ Ժամանակը գալիս է ու անց կենում, գնում: Հորը չպահող տղայի ժամանակն էլ է հասնում, սա էլ հոր նման պառավում, ձեռուոտից ընկնում է:

Հիմի սրա տղան է տեսնում, որ հերը ծանրություն է տալիս իրան, գցում է պարկի մեջ, շալակում բերում սարը, այնտեղ թողնում և ասում է.

– Ապի՛, էստե՛ղ կաց, ես էս ա գալիս եմ:

– Որդի՛,– ասում է հերը,– ես գիտեմ, թե ինչի համար ես բերել ինձ էստեղ: Համա տեղը էս չի, էն կողմն է տեղը, ես իմ հորը հրեն՝ այ, էն քերծովն եմ վեր գցել:

Հոր խոսքերը որ լսում է տղան, ոնց որ թե ուշքի է գալիս, մտածում է՝ թե որ ժամանակը գա, ինքն էլ պառավի, հալից ընկնի, իրա տղեն էլ իրեն պետք է բերի սարումը վեր գցի, բանհոգի անի:

Սուս ու փուս վեր է կենում, բռնում է հոր ձեռը, պաչում: Մենակ մի բան է ասում.

– Ապի՛,– ասում է,– թե կարող ես, ների՛ր ինձ՝ իմ էս արարմունքի համար:

– Ա՛յ որդի,– ասում է հերը,– մեղավորը դու չես: Ես որ իմ հորը իմ ձեռովը այստեղ չգցեի, հիմի իմ որդին էլ ինձ էստեղ չէր բերի:

Տղան լավ հասկանում է հոր խոսքերն էլ, իր աննրելի արարմունքն էլ: Հորը բերում է տուն, պատվով պահում–պահպանում: Երբ որ ժամանակը գալիս է, հերը մնացած ումբրը որդուն է տալի ու մեռնում: Տղան մեծ պատվով թաղում է հորն ու իրա երեխաներրին էլ սովորեցնում մեծի պատիվը պահելը:

3. ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԱՌԱԿԸ

(ըստ Ղուկասի Ավետարանի)

Մի մարդ երկու որդի ուներ: Նրանցից կրտսերը հորն ասաց. «Հայր, տո՛ւր քո ունեցվածքից ինձ հասնող բաժինը»: Եվ նա ունեցվածքը բաժանեց նրանց: Օրեր հետո կրտսեր որդին, փողի վերածելով ամեն ինչ, գնաց հեռու աշխարհ և այնտեղ վատնեց իր ունեցվածքը: Երբ ամեն ինչ սպառեց, այդ երկրում սաստիկ սով եղավ, և նա չքավոր դարձավ: Գնաց դիմեց երկրի քաղաքացիներից մեկին, և սա ուղարկեց նրան իր ագարակը՝ խոզեր արածեցնելու: Նա ցանկանում էր իր որովայնը լցնել եղջերենու պտղով, որ խոզերն էին ուտում, բայց ոչ ոք այդ նրան չէր տալիս: Ապա խելքի եկավ և ասաց. «Քանի՞ վարձու աշխատավորներ կան

իմ հոր տանը, որ առատ հաց ունեն, և ես այստեղ սովամահ կոր-չում եմ: Վեր կենամ, գնամ իմ հոր մոտ և նրան ասեմ. հայր, մե-ղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ և այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու: Ինձ վերցրո՛ւ իբրև քո աշխատավորներից մեկը»: Վեր կացավ եկավ հոր մոտ: Հայրը տեսավ նրան և գթաց: Վազեց նրան ընդառաջ, ընկավ նրա պարանոցով և համբուրեց: Որդին ասաց նրան. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առաջ, այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու»: Հայրն իր ծառաներին ասաց. «Անմիջապես հանեցե՛ք նրա նախկին պատմուճանը և հագցրե՛ք նրան, մատա-նին մատը դրե՛ք և ոտքերին կոշիկներ հագցրե՛ք: Բերե՛ք պարարտ եզը, մորթեցե՛ք, ուտենք և ուրախ լինենք, որովհետև իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»: Սկսեցին ուրա-խանալ: Նրա ավագ որդին ագարակում էր: Երբ մոտեցավ տանը, լսեց երգերի և պարերի ձայն: Իր մոտ կանչելով ծառաներից մե-կին՝ հարցրեց, թե այդ ի՞նչ է: Ծառան նրան ասաց. «Քո եղբայրը եկել է, և քո հայրը մորթեց պարարտ եզը, որովհետև ողջ առողջ ընդունեց նրան»: Նա բարկացավ և չէր ուզում ներս մտնել: Հայ-րը դուրս ելնելով՝ աղաչում էր նրան: Որդին ասաց հորը. «Այս քանի՞ տարի է, որ ծառայում եմ քեզ և երբեք քո հրամանները չեմ անտեսել: Ինձ երբեք մի ուլ չտվիր, որ բարեկամներիս հետ ուրա-խություն անեի: Երբ եկավ քո կրտսեր որդին, որը քո ունեցվածքը կերավ, պարարտ եզը նրա համար մորթեցիր»: Հայրը նրան ասաց. «Որդյա՛կ, դու միշտ ինձ հետ ես, և ամեն ինչ, որ իմն է, նաև քոնն է: Բայց պետք էր ուրախ լինել և ցնծալ, որովհետև քո եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»: